ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վիկտորյա Քեշիշյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի փորձագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2025 թվականի մարտի 11-ից 14-ը ներառյալ

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԵՄ էներգետիկ կարգավորողների խորհուրդ (CEER) և էներգետիկ համայնք (EnCS)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցումը խրախուսելու» EU4Energy ծրագրի շրջանակներում մասնակցություն «Հաճախորդների պաշտպանություն և հզորացում» տարածաշրջանային աշխատաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Բարձարցնել իրազեկվածությունը Արևելյան գործընկերության երկրներում հաճախորդների պաշպանության և հզորացման վերաբերյալ, ներկայացնել ԵՄ երկրներում գործող օրենքները և լավագույն փորձը, տեղեկանալ Արևելյան գործընկերության երկրներում գործող կարգավորումներին

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Միջոցառման շրջանակներում ներկայացվեցին հաճախորդների պաշպանության և հզորացման օերնսդրական շրջանակները ԵՄ երկրներում, դրանց իրականացման գործընթացը Էներեգտիկ Համայնքի երկրներում, մասնավորապես Արևելյան Եվրոպայի երկրներում կիրառվող մոտեցումները, կարգավորման մեխանիզմները, թափանցիկությունը, բողոքները և այլն: Զեկուցներով հանդես եկան, Եվրոպական Հանձնաժողովի, էներգետիկ համայնքի և էներգետիկ կարգավորողների խորհրդի ներկայացուցիչները: Առանձին ելույթներով ներկայացվեցին եվրոպական մի շարք երկրների (Հյուսիսային Մակեդոնիայի, Բոսնիայի և Հերցոգվիանայի) փորձը:
   Նստաշրջաններից մեկում ելույթներով հանդես եկան Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ներկայացուցիչները:
   Ադրբեջանի ներկայացուցիչները մասնակցում էին առցանց ձևաչափով, սակայն ելույթ չներկայացրեցին:

8. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Հանդիպման վերջում ամփոփվեցին ներկայացված ելույթները, նշվեցին կարևոր քայլերը և առավել հետաքրքիր լուծումները:

Նշվեց, որ հանդպման ընթացքում ներկայացված բոլոր ելույթներ կտրամադրվեն մասնակիցներին:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա անելիքների, համագործակցության ձևաչափի, աշխատանքային հանդիպումների կազմակերպման անհրաժեշտության և իրականացման վերաբերյալ:

ՀՀ ՏԿԵ նախարարության էներգետիկայի
վարչության ՎԷ բաժնի փորձագետ Վ. Քեշիշյան